ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

-- սեպտեմբերի 2020 թվականի №Ա
քաղ. Երևան

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2-ՐԴ ԷՆԵՐԳԱԲԼՈԿԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱՁԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 20-Ի №239Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության կառավարությունների միջև 2015 թվականի փետրվարի 5-ին կնքված համաձայնագիրը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության և «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության միջև 2015 թվականի հունիսի 22-ին կնքված ենթավարկային պայմանագիրն առ այն, որ Ռուսաստանի Դաշնության կառավարությունը Հայաստանի Հանրապետության կառավարությանը տրամադրել է մինչև 270 000 000 (երկու հարյուր յոթանասուն միլիոն) ԱՄՆ դոլար գումարի չափով վարկ՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ Ընկերություն) 2-րդ էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգման ծրագրի իրականացման նպատակով,

բ) Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2020 թվականի հուլիսի 28-ի №1/14-1/11214-2020 գրությունը, ըստ որի՝ վերը նշված վարկի շրջանակում փաստացի կատարվել են 170 663 629 (հարյուր յոթանասուն միլիոն վեց հարյուր վաթսուներեք հազար վեց հարյուր քսանինը) ԱՄՆ դոլար գումարի չափով վճարումներ,

գ) Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 11-ի №953Ն որոշումը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ֆինանսների

նախարարության և Ընկերության միջև 2020 թվականի հուլիսի 10-ին կնքված վարկային պայմանագիրն առ այն, որ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից տրամադրվում է մինչև 63 200 000 000 (վաթսուներեք միլիարդ երկու հարյուր միլիոն) ՀՀ դրամ գումարի չափով վարկ՝ Ընկերության 2-րդ էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգման ծրագրի իրականացման նպատակով,

և հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «ժդ» կետը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2010 թվականի հուլիսի 14-ի N365Ն որոշումը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել, որ «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության 2-րդ էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգում» ծրագրի իրականացմանն ուղղված ներդրումային ծրագրի շրջանակում ներգրավված միջոցների՝ Ռուսաստանի Դաշնության կառավարության կողմից 170 663 629 (հարյուր յոթանասուն միլիոն վեց հարյուր վաթսուներեք հազար վեց հարյուր քսանինը միլիոն) ԱՄՆ դոլար գումարի, դրա շրջանակում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համաֆինանսավորված միջոցների, ինչպես նաև ներգրավվելիք միջոցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից մինչև 63 200 000 000 (վաթսուներեք միլիարդ երկու հարյուր միլիոն) ՀՀ դրամ գումարի չափով տրամադրված վարկերի վերադարձը կապահովվի էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության սակագնի հաշվարկում դրանց սպասարկման և մարման ծախսերը ներառելու միջոցով՝ համապատասխանաբար ըստ ենթավարկային և վարկային պայմանագրերում ամրագրված պայմանների։
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2018 թվականի հունիսի 20-ի «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության 2-րդ էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգման» ծրագրի շրջանակում իրականացվող ներդրումների մասին» №239Ա որոշումը։

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
սեպտեմբերի 2020թ.